

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 20 » փետրվարի 2013 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

**«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՄՇԱԿՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Սույն քաղաքականությունը մշակվել է համաձայն ՀՀ-ում բարձրագույն կրթությունը համակարգող օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, բարձրագույն կրթության եվրոպական տարածք ինտեգրումն ապահովող ծրագրերի և նախագծերի, ինչպես նաև ԳՊՄԻ-ի կանոնադրության և ռազմավարական ծրագրի:

Բակալավրական, մագիստրական և հետազոտական կրթական մակարդակների համար համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի /ՄԿԾ/ մշակման, մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականությունն ուղղված է ժամանակակից կրթական բարեփոխումների համատեքստում կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և կրթական չափորոշի պահանջներով մասնագետների պատրաստման գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը, որը կնպաստի ԲԿ եվրոպական տարածքում մասնագիտությունների փոխձանաչման համակարգում ընդգրկվելուն:

Սույն քաղաքականության նպատակն է ապահովել պետական կրթական քաղաքականությանը համապատասխան, ԳՊՄԻ-ի առաքելությանը և նպատակներին համահունչ ՄԿԾ-ների մշակումն ու իրականացումը, որը կնպաստի ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը, ինչպես նաև բուհի միջազգայնացմանը:

Այդ նպատակը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծում.

1. Ապահովել ՀՀ կրթական քաղաքականությանը, ինչպես նաև արտաքին և ներքին շահառուների ժամանակակից պահանջներին և մասնագիտական կարիքներին համապատասխան ՄԿԾ-ներ:
2. Ապահովել ՄԿԾ-ների համապատասխանությունը բուհի առաքելությանը և ռազմավարությանը:
3. Ապահովել շրջանավարտի ձեռքբերած ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանությունը ՀՀ որակավորումների ազգային շրջանակով ամրագրված մակարդակների պետական կրթական չափորոշիչներին ու բնութագրիչներին:
4. Մշակել յուրաքանչյուր մասնագիտության ԿԾ-ի մասնագիրը՝ ներառյալ տվյալ մասնագիտության առանձին առարկաների, մոդուլների/դասընթացների կրեդիտային հենքով ծրագրերը՝ շնորհիվող որակավորման ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հստակ շարադրմամբ: Մասնագիտության մասնագիրը մի փաթեթ է, որը ներառում է մասնագիտության կրթական ծրագրի վերաբերյալ հստակ, ամբողջական տեղեկություն և ունի հետևյալ կառուցվածքը՝
 - ՄԿԾ-ի մուտքի պայմանները
 - ՄԿԾ-ի համառոտ նկարագիրը
 - ՄԿԾ-ի նպատակը և խնդիրները
 - ՄԿԾ-ի վերջնարդյունքները/կոմպետենցիաները՝ առանձնացված ընդհանրական, մասնագիտական ուղղություններով
 - ՄԿԾ-ի կառուցվածքը՝ կրթամասերով և դրանց հատկացվող կրեդիտները (ECTS)
 - ՄԿԾ-ի իրականացման մեթոդաբանությունը
 - ՄԿԾ-ի գնահատման մեթոդները
 - Մասնագիտության ուսումնական պլանը՝ ներառյալ դասընթացները/մոդուլները՝ առարկայական առանձին նկարագրերով:
5. Ուսումնական ծրագրերի պլանավորման, առաջադրման, մշակման, հաստատման, իրականացման, որակի մշտադիտարկման, գնահատման և պարբերաբար վերանայման ընթացակարգերի ներդրում:
6. Ապահովել ՄԿԾ-ն անհրաժեշտ մասնագիտական որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ սահմանելով վերջինիս պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր:
7. Ապահովել ՄԿԾ-ի շրջանակում ուսումնառության արդյունքների գնահատման ակադեմիական ազնվությանը նպաստող հստակ համակարգ և մշակել գնահատման համակարգի հետագա բարելավման մեխանիզմներ:
8. Դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխանեցումը ուսումնառության վերջնարդյունքներին/կոմպետենցիաներին՝ կարևորելով այդ մեթոդների պարբերաբար արդիականացման անհրաժեշտությունը ապահովող մեխանիզմների մշակումը և ներդրումը: Նախագծել և իրականացնել բովանդակային առումով հստակ մշակված ՄԿԾ-ներ, որոնք կապահովեն ուսանողի

պատրաստվածությունը ապագա մասնագիտական գործունեությանը, ինչպես նաև ուսանողների ու դասախոսական կազմի շարժունությունը և միջազգայնացումը:

9. ՄԿԾ-ների որակի ապահովման և հավաստման մեխանիզմների մշակում և ներդրում:

ՄԿԾ-ների մշակման մեթոդաբանություն

1. ՄԿԾ-ների համադրելիության և համեմատելիության ապահովման նպատակով թյունինգ-մեթոդաբանության, ինչպես նաև այդ ուղղությամբ առաջավոր փորձի ուսումնասիրում (բենչմարկինգ), վերլուծություն և ամփոփում:
2. Մասնագիտության կրթական ծրագրի պլանավորման, մշակման, իրագործման և պարբերաբար մոնիթորինգի/մշտադիտարկման փուլերում ծրագրի որակի վրա ազդող կարևոր գործոնների բացահայտում:
3. Անհրաժեշտ ռեսուրսների որակական և քանակական նկարագրում (դասախոսական կազմ, ենթակառուցվածքներ, տեղեկատվական ռեսուրսներ, նյութատեխնիկական բազա):
4. Արտաքին և ներքին շահակիցների ներգրավումը կրթական ծրագրերի մշակման և որակի ապահովման գործընթացներում.
 - կլոր սեղանների անցկացում,
 - ֆոկուս-խմբերի անցկացում,
 - հարցախույզների անցկացում,
 - խորհրդատվությունների, սեմինարների անցկացում՝ նոր մոտեցումների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման նպատակով,
 - հետադարձ կապն ապահովող այլ միջոցների կիրառում:
5. Բոլոր մասնագիտություններին համապատասխանող ընդհանրական և բուն մասնագիտական վերջնարդյունքների/կոմպետենցիաների և ցուցիչների մշակում:
6. Յուրաքանչյուր մոդուլից/դասընթացից ուսանողների ձեռքբերած կրթական արդյունքների գնահատման առավել արդյունավետ մոդելների մշակում և ներդրում:
7. Թյունինգ-մեթոդաբանությանը համապատասխանող առանձին մասնագիտությունների կրթական ծրագրերի կազմում՝ ըստ հետևյալ կառուցվածքի.
 - ծրագրի ուղղվածության (նպատակը, խնդիրները) և նկարագրության (պրոֆիլի) ներկայացումը,
 - ընդհանրական և բուն մասնագիտական ուսումնառության վերջնարդյունքների/կոմպետենցիաների տեսքով ծրագրի վերջնական արդյունքների նկարագրումը,
 - բակալավրի, մագիստրանտի, հետազոտողի միջանկյալ և վերջնական ձեռքբերումների գնահատման մեթոդների նկարագրումը,
 - որակի ապահովման վերահսկման մեխանիզմների նկարագրումը:
8. ՄԿԾ-ների մշակումն իրականացվում է համապատասխան մասնագիտական ամբիոնների կողմից: Մշակման ընթացքի յուրաքանչյուր փուլի արդյունքների

քննարկումը և ՄԿԾ-ների նախագծերի հաստատումը կատարվում է ֆակուլտետների խորհուրդներում:

9. Յուրաքանչյուր մասնագիտության մասնագրի մշակում՝ ներառյալ ECTS կրեդիտային հիմքի հիման վրա կազմված ուսումնական պլանը՝ բոլոր դասընթացների/մոդուլների համար վերջնական արդյունքների/կոմպետենցիաների հստակ շարադրմամբ:
10. Մասնագիտության կրթական ծրագրի պարբերական մշտադիտարկման/մոնիթորինգի, գնահատման և վերանայման պարբերականության ընթացակարգերի մշակում:
11. Մասնագիտական կրթական ծրագրի հաստատումն և վերանայման գործընթացը համակարգում, կազմակերպում և վերահսկում է ԳՊՄԻ-ի ուսումնամեթոդական վարչությունը:
12. Արտաքին և ներքին շահակիցների փոփոխվող պահանջմունքներին և կարիքներին համահունչ ԳՊՄԻ-ի Որակի կենտրոնի կողմից անցկացվող մշտադիտարկման/մոնիթորինգի, վերլուծության և գնահատման արդյունքում ՄԿԾ-ն ենթակա է վերանայման: Բուհի ՈԱԱԿ-ի համակողմանի վերլուծության համաձայն՝ ՄԿԾ-ի հնարավոր վերանայման երաշխավորությունը տալիս է ԳՊՄԻ-ի գիտխորհրդի որակի ապահովման և վերահսկման մշտական հանձնաժողովը: Վերջինիս երաշխավորության դեպքում ուսումնամեթոդական վարչության կողմից վերանայումը հանձնարարվում է թողարկող ամբիոնին, և, ըստ ԳՊՄԻ-ում գործող համապատասխան ընթացակարգերի, իրականացվում է փոփոխությունը: